«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝

«Շիրակ ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ rouben.hakobyan@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07.09.2023թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Դավիթ Բակլաչյան
	Արփի Լազարյան
	Մալվինա Հարությունյան

Վարույթ՝ ՊԼ-021

Խախտում՝

1. Էլեկտրոնային սարքին լուսատախտակի բացակայություն, Մարզադաշտի հաղորդավարի կողմից խաղավերջում պարբերաբար ոչ չեզոք հայտարարություններ, օրինակ՝ «առաջ, Շիրակ, առաջ» (Հավելված 1 Ա, 73-րդ կետ, ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգ՝ 23.13)
2. «Շիրակ» թիմի երկրպագուների կողմից խաղը սպասարկող մրցավարների հասցեին անհարգալից արտահայտություններ թույլ տալը (Հավելված 1 Ա, 21-րդ կետ)
3. «Շիրակ» թիմի երկրպագուների կողմից չորրորդ պաշտոնյայի ուղղությամբ խաղադաշտ իրեր նետելը (Հավելված 1 Ա, 22-րդ կետ)
4. «Շիրակ ՖԱ» ՀԿ կողմից մարզադաշտում կարգուկանոնը չափահովելը (Հավելված 1 Ա, 21-րդ կետ)
5. Խաղի ժամանակահատվածում գովազդային կողավահանանկների ոչ պատշաճ տեղադրում և ՀՖՖ

մարկեթինգի բաժնի կողմից սահմանված շարվածքը չապահովելը (Հավելված 1 Ա, 41-րդ և 42-րդ կետեր)

6. «Շիրակ» թիմի կողմից մամուլի ասուլիսին չմասնակցելը (Հավելված 1 Ա, 48-րդ կետ)
7. Մամուլի ասուլիսին ՀՖՖ կողմից տրամադրված ետնապատի և ֆլեշ-գոտու վահանակի առկայությունը մամուլի ասուլիսների սրահում և խառը գոտում չապահովելը (Հավելված 1 Ա, 38-րդ կետ)
8. «Շիրակ ՖԱ» ՀԿ աշխատակից Սուրեն Սիմոնյանի խաղադաշտ ներխուժելը, Խաղի չորրորդ պաշտոնյային հայհոյելը, հարվածելու փորձ կատարելը (Հավելված 1 Ա, 17 և 32-րդ կետեր)
9. «Շիրակ» թիմի ադմինիստրատոր Ժորա Սիմոնյանի կողմից մրցավարին հարվածելու փորձ կատարելը (Հավելված 1 Բ, 17-րդ կետ)
10. «Շիրակ» թիմի ֆուտբոլիստ Լյովա Կարապետյանի կողմից չորրորդ պաշտոնյային հարվածելու փորձ կատարելը (Հավելված 1 Բ, 17-րդ կետ)

Առաջնություն՝ IDBank ՊԼ 2023-2024
Խաղ՝ «Շիրակ»-«Ուրարտու» (0:2), 26.08.2023թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) դրույթների խախտման համար «Շիրակ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
2. Պատասխանատվության միջոցների համակցության միջոցով վերոնշյալ 2-րդ, 3-րդ և 4-րդ կարգապահական խախտումների համար «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500,000 ՀՀ դրամի չափով:
3. Խաղի ժամանակահատվածում գովազդային կողավահանակների ոչ պատշաճ տեղադրման և ՀՖՖ Մարքեթինգի բաժնի կողմից սահմանված շարվածքի չապահովման համար «Շիրակ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
4. «Շիրակ» թիմի՝մամուլի ասուլիսին չմասնակցելու համար «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200,000 ՀՀ դրամի չափով:

5. Մամուլի ասուլիսին ՀՖՖ կողմից տրամադրված ետնապատի և ֆլեշ-գոտու վահանակի առկայությունը մամուլի ասուլիսների սրահում և խառը գոտում չապահովելու համար «Շիրակ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
6. «Շիրակ ՖԱ» ՀԿ աշխատակից Սուրեն Սիմոնյանի խաղադաշտ ներխուժելու, խաղի չորրորդ պաշտոնյային հայհոյելու, հարվածելու փորձ կատարելու համար վերջինիս զրկել իր ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից 6 ամիս ժամկետով՝ սկսած 2023 թվականի նոյեմբերի 18-ից՝ հաշվի առնելով նշված ֆուտբոլային սուբյեկտի՝ ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից զրկված լինելու հանգամանքը, ինչպես նաև «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հազարհինգհարյուրապատիկի՝ 1,500,000 ՀՀ դրամի չափով:
7. «Շիրակ» թիմի ադմինիստրատոր Ժորա Սիմոնյանի կողմից մրցավարին հարվածելու փորձ կատարելու համար վերջինիս զրկել իր ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից 3 խաղով և «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ 300,000 ՀՀ դրամի չափով:
8. «Շիրակ» թիմի ֆուտբոլիստ Լյովա Կարապետյանի կողմից չորրորդ պաշտոնյային հարվածելու փորձ կատարելու համար որակազրկել 3 խաղով և «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ 300,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին

ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:

- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: